# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.01.2016թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ 49/15**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՀ-ի 16.12.2015թ. և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի 17.12.2015թ. ներկայացրած բողոքները (այսուհետ նաև՝ ԳԲԽ-49/15 բողոք) և կից փաստաթղթերը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 21.12.2015թ., 22.12.2015թ. և 29.12.2015թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/9246-15 գրությունները և կից փաստաթղթերը, «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՀ-ի ի լրումն 16.12.2015թ. բողոքի 22.12.2015թ. ներկայացրած գրությունը և 28.12.2015թ. գրությամբ ներկայացրած առարկությունները, «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և ԳԲԽ-49/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 30.12.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

### 1. <u>«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՀ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՀ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն 1) 16.12.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 48-րդ հոդվածը և հաշվի առնելով ՀՀ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անհրաժեշտ կենսապատվաստուկների և ախտորոշիչ միջոցների ձեռքբերման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ նաև՝

Պատվիրատու) կազմակերպած «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) տեղ գտած խախտումները՝ «ՇՁՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն՝ ի դեմս լիազոր ներկայացուցիչ Նարեկ Վահագնի Աբրահամյանի (լիազորագիրը կից ներկայացվել է) նույնով բողոքարկում է Ընթավակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնման գործընթացի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին 07.12.2015թ. թիվ 4 որոշումը:

Գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 7-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել են Ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որոնց համաձայն՝ ներկայացված չափաբաժիններից շուրջ 6-ի գծով հաղթող է ճանաչվել «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»: Նշված կարգավորումից հետևում է, որ հրավերով սահմանված պահանջների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հիմք է տվյալ մասնակցի հայտը մերժելու համար:

«ՇՁՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն գտնում է, որ պայմանագիր կնքելու որոշումն անհիմն է և ենթակա է վերացման, քանի որ Ընթացակարգում տեղ են գտել հրավերով սահմանված պահանջների էական խախտումներ: Մասնավորապես, ներկայացրել են հետևյալ խախտումները, որոնք վերաբերում են հրավերով ներկայված 1-ին չափաբաժնին.

I. Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանված է. «...«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայ-

տությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անհրաժեշտ կենսապատվաստուկների և ախտորոշիչ միջոցների մատակարարումը:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները»:

«Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն ի կատարումն վերը նշված պահանջի՝ Պատվիրատուին է ներկայացրել թվով 4 պայմանագրեր՝ կնքված 2014-2015թթ.:

Նշված պայմանագրերի և մի շարք այլ փաստաթղթերի պատճենները «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն ձեռք է բերել Պատվիրատուին էլ. նամակով կատարած համապատասխան հարցմամբ:

Ուսումնասիրելով Պատվիրատուից ստացված փաստաթղթերը՝ Ընկերություն 1 գտնում է, որ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերի արժանահավատությունը պատշաճ կերպով չի ստուգվել գնահատող հանձնաժողովի կողմից և բավարար հիմքեր կան կասկածելու, որ որոշ պայմանագրերում ներկայացված է ոչ ճիշտ տեղեկատվություն: Մասնավորապես, ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության և «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի միջև 09.01.2014թ-ին կնքված «Պետության կարիքների համար գյուղկենդանիների հիվանդությունների դեմ պատվաստանյութերի և շիճուկների ձեռքբերման պետական գնման» պայամանագրի, տեխնիկական բնութագրի և հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությանը մատակարարել է 105 հազար դոզա հակադաբաղային պատվաստանյութ: Մեկ այլ՝ 02.12.2014թ. «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի և «Սոնետ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի և վերջինիս հիման վրա կողմերի միջև ստորագրված հանձնման-ընդունման ակտի և դուրս գրված հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն վերջինիս մատակարարել է 870 հազար դոզա հակադաբաղային պատվաստանյութ: Այնուհետև՝ 02.03.2015թ., «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն կնքել է պայմանագիր «Մաքս Պրո» ՍՊԸ-ի հետ: Նշված պայմանագրի և վերջինիս հիման վրա կողմերի միջև ստորագրված հանձնման–ընդունման ակտի և դուրս գրված հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն «Մաքս Պրո» ՍՊԸ-ին մատակարարել է 115 հազար դոզա հակադաբաղային պատվաստանյութ:

Այսպիսով, Ընկերություն 1-ի ներկայացրած փաստաթղթերից երևում է, որ 1-ին պայմանագրով մատակարարված ապրանքների վերաբերյալ կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու ամսաթվից՝ 18.02.2014թ. մինչև 3-րդ պայմանագրով մատակարարված ապրանքների վերաբերյալ կողմերի միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրման ամսաթիվը՝ 25.03.2015թ., «Ագրոխիմ-պրոմ» ՍՊԸ-ն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ընդհանուր առմամբ մատակարարել է 1,090,000 դոզա հակադաբաղային պատվաստանյութ (105,000+870,000+115,000=1,090,000):

Ընկերություն 1-ը նշել է, որ ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքում առկա է տեղեկատվություն ԼՂՀ-ում խոշոր և մանր եղջերավոր անասունների, ինչպես նաև խոզերի գլխաքանակի մասին (http://minagro.nkr.am/?page_id=2192&lang=hy, http://minagro.nkr.am/wpcontent/uploads/-Hashvetvouthyoun_2014.pdf), համաձայն որի՝ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ-ում խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 57,998, մանր եղջերավոր անասունների թիվը՝ 116,189, իսկ խոզերի թիվը՝ 13,248:

Ընկերություն 1-ը նշել է նաև, որ խոշոր եղջերավոր անասունի համար հակադաբաղային պատվաստանյութն օգտագործվում է 1 դոզա, իսկ մանր եղջերավոր անասունի և խոզի համար՝ 0,5 դոզա: Նշված հիվանդության նկատմամբ պատվաստումն իրականացվում է տարվա ընթացքում 2 անգամ՝ գարնանը և աշնանը:

Հաշվի առնելով ԼՂՀ-ում առկա կենդանիների գլխաքանակը և պահանջվող պատվաստանյութի դոզաները՝ յուրաքանչյուր սեզոնային պատվաստման համար ԼՂՀ-

ում պահանջվող հակադաբաղային պատվաստանյութի քանակը հետևյալն է՝ 57,998 x 1 դոզա = 57,998 դոզա, 116,189 x 0,5 դոզա = 58,094.5 դոզա, 13,248 x 0,5 դոզա = 6,624 դոզա, ընդհանուր՝ 122,716.5 դոզա, իսկ տարեկան 2 սեզոնային պատվաստման համար պահանջվող պատվաստանյութերի ընդհանուր քանակը համապատասխանաբար կկազմի 245,433 դոզա: Մինչդեռ, ինչպես արդեն Ընկերություն 1-ը նշել է, «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերի համաձայն՝ 18.02.2014թ. մինչև 25.03.2015թ. (մոտ 13 ամսվա ընթացքում) վերջինս ԼՂՀ մատակարարել է շուրջ 1,090,000 դոզա հակադաբաղային պատվաստանյութ, ինչը ավելի քան 4 անգամ գերազանցում է տարեկան պահանջվող պատվաստանյութի քանակը: Եթե հաշվի առնենք, որ նշված պատվաստանյութի պահպանման ժամկետը սովորաբար կազմում է 9 ամիս, ակնհայտ է որ նման մեծ քանակությամբ պատվաստանյութի մատակարարումը որևէ կերպով հնարավոր չէ հիմնավորել:

Ըստ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ի՝ ակնհայտ է, որ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերի արժանա-հավատությունը կասկածելի է, և դրանք չէին կարող հիմք ընդունվել տվյալ Ընթացակարգի արդյունքներով նշված ընկերության հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելու համար:

Միաժամանակ, ըստ Ընկերություն 1-ի, պայմանագրերի արժանահավա-տությունը կասկածելի է նաև հետևյալ պատճառով. ԼՂՀ-ում վարակիչ հիվանդությունների հարուցիչների ներթափանցումը կանխարգելող միջոցառումները (այդ թվում՝ հակադաբաղային պատվաստումը) կազմակերպում է ԼՂՀ անասնաբուժական և անասնապահական պետական տեսչությունը: Այս տեղեկատվությունը ևս առկա է ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքում (http://minagro.nkr.am/?page_id=-1736&lang=hy): Այս պարագայում Ընկերություն 1-ի համար անհասկանալի է, թե ինչու են երկու մասնավոր ընկերություններ՝ «Սոնետ» ՍՊԸ-ն և «Մաքս Պրո» ՍՊԸ-ն նշված պատվաստանյութի ձեռքբերման համար պայմանագրեր կնքել «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի հետ:

Հաշվի առնելով վերը ներկայացված փաստերն ու հիմնավորումները՝ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ն գտնում է, որ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն չի բավարարել հրավերի 2.3 կետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը, քանի որ վերջինս չի հիմնավորել, որ նախկինում կնքած պայմանագրերի

շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ Ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից:

II. «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն բողոքով նշել է, որ առկա է Ընթացակարգի մեկ այլ խախտում՝ կապված «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնով ներկայցված գնի առաջարկի գնահատման հետ:

Ընթացակարգով Պատվիրատուի կողմից 1-ին չափաբաժնի՝ հակադաբաղային պատվաստանյութի համար մեկ միավորի առավելագույն գին սահմանվել է 198 ՀՀ դրամը:

Ընկերություն 1-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնի առաջարկի համաձայն՝ 1-ին չափաբաժնով մատակարարման ենթակա 2,273,900 դոզա պատվաստանյութերի համար առաջարկվել է 425,219,300 ՀՀ դրամ, հետևաբար 1 դոզա պատվաստանյութի արժեքը կազմել է 187 ՀՀ դրամ (425,219,300 / 2,273,900 = 187), որի հաշվարկման հիմքում դրվել է հրավերով սահմանված ծախսերի և ինքնարժեքի հաշվարկը:

Մինչդեռ, «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնի առաջարկի համաձայն՝ 1-ին չափաբաժնով մատակարարման ենթակա 2,273,900 դոզա պատվաստանյութերի համար վերջինս առաջարկել է 336,523,200 ՀՀ դրամ, հետևաբար 1 դոզա պատվաստանյութի արժեքը կազմել է 147.99 ՀՀ դրամ (336,523,200 / 2,273,900=147.99): Նշված մեկ միավորի գինը պակաս է գնման հայտով նախատեսված առավելագույն գնի՝ 198 ՀՀ դրամի 75 տոկոսից:

Հրավերի 1-ին մասի 7.5 կետի համաձայն՝ «Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ .... 3) ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած

մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից»:

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՀ-ն, ուսումնասիրելով «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկը, նշել է, որ այն չի համապատասխանել հրավերով սահմանված ծախսերի և ինքնարժեքի հաշվարկման պահանջին: Չնայած նրան, որ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ներկայացրել է գնի հիմնավորումներ, այնուամենայնիվ գնահատող հանձնաժողովը այդ հիմնավորումները պետք է ոչ բավարար համարեր և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացներ հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՀ-ին:

Ընկերություն 1-ը, որպես վերը նշվածի հիմնավորվում ներկայացրել է հետևյալ փաստերով.

Մասնակցի կողմից Պատվիրատուին էլ. նամակով կատարված համապատասխան հարցման արդյունքում վերջինս, ի թիվս այլ փաստաթղթերի, էլ. փոստով ներկայացրել է նաև «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկի հիմնավորում հանդիսացող փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝

- ✓ ՌԴ-ում գործող «Ստավրոպոլսկայա բիոֆաբրիկա» ՖԿՊ-ի 04.12.2015թ. թիվ 1934 գրության պատճենը,
- ✓ հակադաբաղային պատվաստանյութի արտադրող հանդիսացող ՌԴ-ում գործող «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ի 07.12.2015թ. թիվ 09-02/8123 գրության պատճենը:

Ըստ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՀ-ի՝ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերից երևում է, որ վերջինիս մատակարար պետք է հանդիսանա «Ստավրոպոլսկայա բիոֆաբրիկա» ՖԿՊ-ն, որը սակայն չի հանդիսանում պատվաստանյութի արտադրողը և իր հերթին պատվաստանյութերը պետք է ձեռք բերի դրանց արտադրող հանդիսացող «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ից:

«Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի տնօրենին «Ստավրոպոլսկայա բիոֆաբրիկա» ՖԿՊ-ի կողմից հասցեագրված գրության մեջ նշված է հակադաբաղային պատվաստանյութի հետևյալ արժեքը՝ 14,500,0 ՌՌ/հազար դոզա: Մեկ միավոր դոզայի արժեքը ՀՀ դրամով կլինի հետևյալը՝ 14,500,0 / 1000 x 7.5 [1] = 108,75 ՀՀ դրամ:

[1] ՀՀ դրամի միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ

«Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի տնօրենին ուղղված «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ի գրության մեջ նշված է «Ստավրոպոլսկայա բիոֆաբրիկա» ՖԿՊ-ի միջոցով ՀՀ 2,273,900 դոզա հակադաբաղային պատվաստանյութ մատակարարելու պատրաստակամության մասին, և գրությունը որևէ նշում չի պարունակում գործարանային գնի մասին:

Ընկերություն 1-ը հայտնել է նաև, որ Պատվիրատուին էլ. նամակով կատարված համապատասխան հարցման արդյունքում «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ին են ուղարկվել նաև հետևյալ փաստաթղթերը.

- ✓ ՀՀ ԱԳ նախարարության 08.12.2014թ. գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը փոխանցված ՌԴ գյուղատնտեսության նախարարության 04.12.2014թ. թիվ 12/1816 գրության պատճենը,
- ✓ «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն ուղղված 19.10.2015թ. էլ. նամակի պատճենը:

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ն տեղեկացրել է, որ ՌԴ գյուղատնտեսության նախարարության 04.12.2014թ. թիվ 12/1816 գրությամբ վերջինս հայտնել է պատրաստակամություն ՀՀ մատակարարել հակադաբաղային պատվաստանյութ՝ 1 դոզայի արժեքը նշելով 178 ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ ՌԴ-ում նշված պատվաստանյութն արտադրվում է պետական կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ն և «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ն: Հետևաբար, գրության մեջ նշելով 178 ՀՀ դրամ միավորի արժեք՝ ՌԴ գյուղատնտեսության նախարարությունը հաշվի է առել ՌԴ-ի տվյալ շուկայում գործող գները, այդ թվում՝ «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ի համապատասխան գները: Այս պարագայում անհասկանալի է, թե ինչպես է ձևավորվել «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն առաջարկվող «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ի արտադրության պատվաստանյութի մեկ դոզայի 147.99 ՀՀ դրամ գինը: Հատկապես չհիմնավորված ցածր է «Ստավրոպոլսկայա բիոֆաբրիկա» ՖԿՊ-ից պատվաստանյութի մեկ դոզայի ձեռքբերման 108,75 ՀՀ դրամ գինը: Էական կասկածների տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, որ եթե «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ին «Ստավրոպոլսկայա բիոֆաբրիկա» ՖԿՊ-ն առաջարկել է 108,75 ՀՀ դրամ միավորի գին, ապա վերջինս, իր հերթին, էլ ավելի ցածր գնով պետք է ձեռք բերեր պատվաստանյութը «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ից:

Ընկերություն 1-ը նշել է, որ «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն ուղղված 19.10.2015թ-ի էլ. նամակով վերջինս հակադաբաղային պատվաստանյութի 1000 դոզայի արժեքը նշել է 400 ԱՄՆ դոլար: Մեկ դոզայի արժեքը ՀՀ դրամով կլինի հետևյալը՝ 400 / 1000 x 4802 = 192 ՀՀ դրամ:

Փաստորեն, ըստ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒԶ-ի, 19.10.2015թ. «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ն ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն առաջարկել է մատակարարել նշված պատվաստանյութը շուրջ 44.01 ՀՀ դրամով ավելի բարձր գնով, քան այն գինը, որը «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն նույն Ընթացակարգի շրջանակում առաջարկում է Պատվիրատուին նույն «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ի արտադրության հակադաբաղային պատվաստանյութի համար: Այս պայմաններում գնահատող հանձնաժողովը «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկի հիմնավորումները բավարար համարելու որևէ հիմքեր չուներ, քանի որ ակնհայտ է, որ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն չէր կարող ապրանքի արտադրողի գնից այդքան ավելի ցածր գին առաջարկել՝ հաշվի առնելով Հրավերի 2-րդ մասի 4.1 կետի պահանջը, համաձայն որի՝ «Առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով Համակարգի միջոցով»:

Ըստ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒԶ-ի՝ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից նման ցածր գնի առաջարկը բավարար հիմքեր է տալիս կասկածելու, որ վերջինս պատրաստվում է ոչ պատշաճ որակի հակադաբաղային պատվաստանյութեր մատակարարել Պատվիրատուին կամ առկա է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված հակամրցակցային համաձայնություն «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի, «Ստավրոպոլսկայա բիոֆաբրիկա» ՖԿՊ-ի և «ՎՆԻԻԶԺ» ՖԳԲՈՒ-ի միջև:

Հաշվի առնելով վերոգյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31, 45, 48, հոդվածները՝ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒԶ-ն խնդրել է դադարեցնել «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով գնման գործընթացի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին գնահատող հանձնաժողովի 07.12.2015թ. թիվ 4 որոշումը:

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒԶ-ն, ի լրումն 16.12.2015թ. բողոքի, 22.12.2015թ. գրությամբ ներկայացրել է բողոքի հետևյալ լրացումները.

Հաշվի առնելով բողոքի մեջ ներկայված հիմնավորումները և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 45-րդ և 48-րդ հոդվածները՝ Ընկերություն 1-ը խնդրել է՝

1. Բավարարել «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ի բողոքը և 1-ին չափաբաժնի մասով «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ին 1-ին տեղը զբաղեցրած ճանաչելու մասով դադարեցնել «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին գնահատող հանձնաժողովի 07.12.2015թ-ի թիվ 4 որոշումը,

2. «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով գնման ընթացակարգի միջոցով գնում կատարելու հրավերի հիման վրա 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ին՝ միաժամանակ անվավեր ճանաչելով գնահատող հանձնաժողովի 07.12.2015թ. թիվ 4 որոշումը՝ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ին նշված չափաբաժնով առաջին տեղն ընտրված մասնակից ճանաչելու մասով,

3. Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մասամբ կասեցնել գնահատող հանձնաժողովի 07.12.2015թ. թիվ 4 որոշման իրականացմանն ուղղված գործողությունները, մինչև բողոքով բարձրացված հարցի վերջնական լուծումը:

Միաժամանակ վերը նշված գրությամբ ներկայացվել է «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ի՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ներկայացված պատվաստանյութի ինքնարժեքի հիմնավորման վերաբերյալ գրության պատճենը:

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ն 28.12.2015թ. ներկայացրել է «Ամասիա» ՍՊԸ-ի կողմից 17.12.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ առարկություններ:

## 2. «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն 2) 17.12.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն կողմից Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի և Ախտորոշման նյութերի գնման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ՝ 7 չափաբաժիններով:

2. Հրավերի 1-6-րդ չափաբաժնի առարկան է հանդիսացել «Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր», իսկ 7-րդ չափաբաժնի առարկան՝ «Ախտորոշման նյութեր»:

3. «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն սահմանված կարգով հայտ է ներկայացրել (գնային առաջարկ է ներկայացրել) 1-7-րդ չափաբաժիններով պայմանագիրը կատարելու համար:

4. Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել նաև «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն (1-6-րդ չափաբաժիններ) և «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն (1-ին, 4-7-րդ չափաբաժիններ):

5. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն կողմից ձևավորված գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2015 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 4 որոշմամբ (2015 թվականի դեկտեմբերի 7-ի «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի Հանձնաժողովի նիստի N 4 արձանագրություն) հաստատվել են «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի՝ որակավորման պահանջներին հրավերով սահմանված պայմաններին պահանջներին համապատասխանության արդյունքները:

6. Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 4 որոշմամբ (Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն)) 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել՝ 1-6-րդ չափաբաժիններով՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն, իսկ 7-րդ չափաբաժնով՝ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն: Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշը նվազագույն գինն է:

7. Ըստ Հայտարարության՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ին և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ին սահմանված կարգով ներկայացվելու է պայմանագիր կնքելու առաջարկ՝ համապատասխանաբար 1-6-րդ և 7-րդ չափաբաժիններով:

8. Ի հիմնավորումն Հրավերով սահմանված չափանիշին (Հրավերի 3.1 հավելված) իր համապատասխանության՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթղթերը, (մասնավորապես՝ հետևյալ 4 պայմանագրերը՝ 2015 թվականի մարտի 2-ի Պայմանագիր, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի Պայմանագիր, 2014 թվականի հունվարի 9-ի «Պետության կարիքների համար գյուղկենդանիների հիվանդությունների դեմ պատվաստանյութերի և շիճուկների ձեռքբերման պետական գնման N ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-13/7-3» պայմանագիր, 2015 թվականի հունվարի 12-ի «Պետության կարիքների

համար գյուղկենդանիների հիվանդությունների դեմ պատվաստանյութերի ձեռքբերման պետական գնման N ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-14/2-3» պայմանագիր), որոնք արժանահավատ չեն:

9. Ըստ 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 3 արձանագրության 1.6.1 կետի՝ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցնող 1-ին, 4-րդ, 7-րդ չափաբաժիններով: Սակայն 2015 թվականի դեկտեմբերի 7-ի Հայտարարության մեջ նշվել է, որ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցնող 1-ին և 7-րդ չափաբաժիններով:

10. Ըստ 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 3 արձանագրության 1.6.1 կետի՝ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցնող՝ 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով: Սակայն 2015 թվականի դեկտեմբերի 7-ի Հայտարարության մեջ նշվել է, որ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցնող՝ 2-6-րդ չափաբաժիններով:

11. Հրավերով նշված ապրանքի գնման գործարքը ՀՀ-ում ԱԱՀ-ով հարկվող գործարք է, իսկ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն և «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարելու պարտավորություն ունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպություններ են:

«ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն որպես բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացրել է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

Տնտեսական մրցակցության սահմանադրահիրավական երաշխիքի իրացման օրենսդրական հիմքերը, որպես սկզբունքներ, ամրագրված են նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք), մասնավորապես՝ 3-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում (...):

Պետական մարմինների կողմից գնումների գործընթացում, այնպես էլ ընդհանուր գործունեության ընթացքում օրինականության ապահովման սահմանադրական հիմքերն

ամրագրված են ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Որպես հիմնարար արժեքներ՝ նշված նորմերում ամրագրված դրույթները իմպերատիվ ձևով թելադրում են իրավասու պաշտոնատար անձանց ձեռնարկելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցառումներն ազատ տնտեսական մրցակցության ապահովման առաքելության իրականացման նպատակով, ինչը սակայն Ընկերություն 2-ի առնչության չի ապահովվել, որի հետևանքով «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի իրավունքներն անհիմն սահմանափակվել են:

Հանձնաժողով պատշաճ գնահատման չի արժանացրել «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի կողմից ներկայացված հայտերը, գնի առաջարկը, դրանց հիմնավորվածությունը և համապատասխան փաստաթղթերի արժանահավատությունը, որի արդյունքում, ըստ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի, խախտվել են Հրավերում նշված մի շարք այլ պայմաններ: Այսպես՝

**1) «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի դիրքորոշում «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի՝ 1-6-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչելու մասով Հանձնաժողովի որոշման անհիմն լինելու մասով.**

«ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր գնի առաջարկը (Հավելված 4) ընդհանուր առմամբ 391.019.760 (երեք հարյուր իննսունմեկ միլիոն տասնինը հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով: Ըստ որում՝ հաշվարկը իրականացվել է՝ ԱԱՀ ներառյալ:

Հրավերի (Հավելված 3.1) համաձայն՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարության պայմաններին համապատասխան՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է պայմանագրեր, որոնց գների հանրագումարը կազմում է 206.000.000 (երկու հարյուր վեց միլիոն) ՀՀ դրամ: Այսինքն՝ թվաբանորեն գերազանցում է իր գնային առաջարկի 50 տոկոսը, իսկ պայմանագրերից՝ մեկի (2014 թվականի դեկտեմբերի 2-ի Պայմանագիր) գինը՝ գնային առաջարկի 20 տոկոսը:

Սակայն այդ բոլոր պայմանագրերը, մասնավորապես՝ 2015 թվականի մարտի 2-ի Պայմանագիրը, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի Պայմանագիրը, 2014 թվականի հունվարի 9-ի «Պետության կարիքների համար գյուղկենդանիների հիվանդությունների

դեմ պատվաստանյութերի և շիճուկների ձեռքբերման պետական գնման N ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-13/7-3» պայմանագիրը, 2015 թվականի հունվարի 12-ի «Պետության կարիքների համար գյուղկենդանիների հիվանդությունների դեմ պատվաստանյութերի ձեռքբերման պետական գնման N ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-14/2-3» պայմանագիրը, արժանահավատ չեն և չէին կարող հիմք համարվել Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելիս, քանի որ չունին կատարված լինելու հավաստի հիմնավորումներ ու չեն բավարարում Հրավերի պայմաններին:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝ դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն իր իրավունքների արդյունավետ պաշտպանության նկատառումով վիճարկում է 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 3 արձանագրության 1.6.1 կետի՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի 1-6-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցնող ճանաչվելու հանգամանքը (Հանձնաժողովի որոշումը՝ որպես գործողություն) և 2015 թվականի դեկտեմբերի 7-ի N 4 արձանագրության մեջ (նաև Հայտարարությամբ) «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և նրան պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ որոշումը:

**2) «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի դիրքորոշումը «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի՝ 1-ին, 4-րդ և 7-րդ չափաբաժիններով 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչելու մասով Հանձնաժողովի որոշման անհիմն լինելու մասով.**

Նախ՝ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի համար պարզ չէ, թե, ի վերջո, Հանձնաժողովի կողմից 4-րդ չափաբաժնի մասով, որ կազմակերպությունն է ճանաչվել 2-րդ տեղն զբաղեցնող: Բանն այն է, որ ըստ 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 3 արձանագրության 1.6.1 կետի՝ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցնող 1-ին, 4-րդ, 7-րդ չափաբաժիններով: Սակայն 2015 թվականի դեկտեմբերի 7-ի Հայտարարության մեջ նշված է, որ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցնող 1-ին և 7-րդ չափաբաժիններով: Իսկ 2015 թվականի դեկտեմբերի 7-ի N 4 արձանագրությանն մեջ, առհասարակ, բացակայում է «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն, և ընտրված մասնակից են ճանաչվել «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն և

«ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն, որոնց պետք է ներկայացվեր պայմանագիր կնքելու առաջարկ:

Հետևաբար՝ ստացվում է, որ ըստ 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 3 արձանագրության 1.6.1 կետի՝ Ընկերություն 2-ը ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցնող 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով: Մինչդեռ 2015 թվականի դեկտեմբերի 7-ի Հայտարարության մեջ նշված է, որ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցնող 2-6-րդ չափաբաժիններով: Իսկ 2015 թվականի դեկտեմբերի 7-ի N 4 արձանագրության ընտրված մասնակից են ճանաչվել «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն և «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ, որոնց պետք է ներկայացվեր պայմանագիր կնքելու առաջարկ:

«ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն իր իրավունքների արդյունավետ պաշտպանության նկատառումով վիճարկում է 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 3 արձանագրության 1.6.1 կետի՝ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի՝ 4-րդ չափաբաժինով 2-րդ տեղը զբաղեցնող ճանաչվելու հանգամանքը (Հանձնաժողովի որոշումը՝ որպես գործողությունը):

Ինչ վերաբերում է 1-ին չափաբաժնով «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ին երկրորդ տեղը զբաղեցրած ճանաչելուն, ապա «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի համոզմամբ՝ Հանձնաժողովը չէր կարող այդ որոշումը կայացներ: Այնինչ Հանձնաժողովը առանց հիմնավորման ու պատճառաբանության 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել է «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ին, որը նշել է իր գնային առաջարկում 425.219.300 (չորս հարյուր քսանհինգ միլիոն երկու հարյուր տասնինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Մինչդեռ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն՝ 395.524.500 (երեք հարյուր իննսունհինգ միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Բանն այն է, որ ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշը նվազագույն գինն է:

Ընկերություն 2-ը հայտնել է նաև, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 6-րդ, 15-րդ հոդվածների դրույթներին համապատասխան՝ Հրավերով նշված ապրանքի գնման գործարքը ՀՀ-ում ԱԱՀ-ով հարկվող գործարք է, իսկ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն ԱԱՀ վճարելու պարտավորություն ունեցող կազմակերպությունն է, ուստի պետք է այդ գումարին գումարվեր ԱԱՀ գումարը, իսկ այդ պարագայում ակնհայտ է դառնում, որ 1-ին չափաբաժնով 2-րդ տեղը զբաղեցնելու էր

«ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս, հրավերով սահմանած դեպքերում և կար•ով, առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ, որոնք հնարավոր է չափել դրամական արտահայտությամբ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Վերոնշյալ իրավական և փաստական հիմքերի համադրման արդյունքում Ընկերություն 2-ը եկել է այն եզրահանգմանը, որ տվյալ գնումների գործընթացում ոչ միայն չի ապահովվել տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում, այլ թույլ է տրվել ոչ մրցակցային և խտրական վերաբերմունք մասնակիցների նկատմամբ՝ անհիմն առավելություն տալով մասնակիցներից մեկին:

Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 7-ի Հայտարարությամբ (Պայմանագիր կնքելու որոշման մասին) ընտրված մասնակից ճանաչված «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ն չէր կարող և չպետք է ճանաչվեր 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնի մասով:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝ որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ:

Նկատի առնելով վերոհիշյալ իրավակարգավորումը՝ այդ իրավական հիմքով «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ մինչև սույն խնդրո առարկա հարցով ըստ էության որոշման կայացումը, կասեցնել գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 7-ի որոշումը՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի հետ «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 1-6-րդ չափաբաժինների մասով պայմանագրի կնքման վերաբերյալ:

2. Բավարարել «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի բողոքը և մասամբ՝ 1-6րդ չափաբաժինների մասով «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ին 1-ին տեղը զբաղեցրած ճանաչելու մասով, դադարեցնել Ընթացակարգի հրավերի հիման վրա գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 7-ի պայմանգիր կնքելու մասին թիվ 4 որոշումը:

3. Ընթացակարգի հրավերի հիման վրա 2-6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած (ընտրված) մասնակից ճանաչել «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 7-ի որոշման՝ 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի հայտը ճանաչել գինը գերազանցող՝ հանելով ցուցակից, և այդ մասով որոշումը ճանաչել անվավեր:

**3. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները**

ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը 21.12.2015թ. գրությամբ ներկայացրել է «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի 16.12.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով

իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անհրաժեշտ կենսապատվաստուկների և ախտորոշիչ միջոցների մատակարարումը:

Հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ բացի վերոնշյալ պայմանագրերը, մասնակիցը պետք է ներկայացնի նաև այդ պայմանգրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչն էլ ներկայացվել է «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից:

«Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնով ներկայացված գնային առաջարկը ցածր է հրավերի գնման հայտով նույն չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից: Գնահատող հանձնաժողովի պահանջով «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է լրացուցիչ հիմնավորումներ:

Պատվիրատուն 22.12.2015թ. գրությամբ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի 17.12.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է նաև լրացուցիչ հիմնավորումներ այն չափաբաժինների վերաբեյալ, որոնց գնային առաջարկը ցածր է հրավերի գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Հրավերի 1-ին չափաբաժնով 2-րդ տեղ ճանաչված «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ին հնարավոր չէ ճանաչել գնման հայտով նախատեսված առավելագույն գինը գերազանցող մասնակից, քանի որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում գնման հայտով նախատեսված առավելագույն գինը:

Պատվիրատուն 29.12.2015թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/9246-15 գրությամբ, ի լրումն ՀՀ գյուղատնտեսության նախարարության 18.12.2015թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/8972-15 գրության, «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի 16.12.2015թ. ներկայացրած բողոքի լրացման վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի կողմից լրացմանը կից ներկայացվել է պատվաստանյութի ինքնարժեքի վերաբերյալ տեղեկատվություն, համաձայն որի՝ հակադաբաղային պատվաստանյութի գինն առանց տեղափոխման և ապահովագրման ծախսերի ավելի ցածր է, քան «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի գնային առաջարկով ներկայացված վերոնշյալ պատվաստանյութի ինքնարժեքը: Սակայն նախարարությունը գտնում է, որ վերոնշյալ փաստարկը դեռևս բավարար հիմք չէ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի ներկայածված գնային առաջարկը չհիմնավորված ցածր համարելու, քանի որ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ն ներկայացրել է մեկ այլ արտադրող ընկերության կողմից տրված փաստաթուղթը, որով հավաստվում է Հայաստանի Հանրապետությանը համապատասխան չափաքանակի և տեխնիկական բնութագրի պատվաստանյութերի մատակարարման պատրաստակամությունը: Նշված փաստաթուղթը տրամադրվել է Կենտրոնին Պատվիրատուի 18.12.2015թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/8972-15 գրությամբ:

Միաժամանակ ընկերությունը հայտնել է, որ հանդիսանալով արտադրող՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք հնարավոր է մատակարարել իր կողմից նշված գնով: Սակայն, վերոհիշյալ փաստարկը հիմք չի կարող հանդիսանալ նախարարության համար այլ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը ոչ հավաստի համարելու համար, քանի որ միևնույն արտադրանքը հնարավոր է տարբեր արտադրողների մոտ ունենա տարբեր ինքնարժեքներ և տարբեր մատակարարներ՝ ելնելով իրենց տնտեսական շահերից մատակարարեն տարբեր գներով:

Պատվիրատուն նշել է, որ համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրության՝ պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու դեպքում մատակարարը կրում է պատասխանատվություն: Ուստի, եթե հաղթող ճանաչված կազմակերպությունը մատակարարի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, ապա վերջինս պատասխանատվության կենթարկվի

պայմանագրի պայմաններին համապատասխան և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Ընթացակարգի վերաբերյալ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի 17.12.2015թ. ներկայացրած բողոքի «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման պայմանգրերի ոչ արժանահավատ համարելու մասով Պատվիրատուն հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընդամենը գնահատում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և փաստաթղթերի կեղծ լինելու վերաբերյալ համապատասխան նյութեր ներկայացնելու դեպքում դրանք կտրամադրվի իրավապահ մարմիններին:

Միաժամանակ Պատվիրատուն նշել է, որ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 36-րդ կետի 8-րդ ենթակետի՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով: Նույն դրույթը ներառված է ընթացակարգի հրավերի N 6 հավելվածով ներկայացված պայմանագրի նախագծում: Ուստի, ներկայացված

փաստաթղթերը կեղծ համարվելու դեպքում պատվիրատուն իրավունք կունենա միակողմանի լուծելու պայմանագիրը և ընկերության նկատմամբ կկիրառվի ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցները:

2.1 Ընթացակարգի վերաբերյալ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի 17.12.2015թ. ներկայացրած բողոքի «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ին 1-ին չափաբաժնով 2-րդ տեղ ճանաչելու գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը անհիմն համարելու մասով Պատվիրաուն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով: Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 4-րդ կետի 4.1 ենթակետում առկա է վերոնշյալ նշումը:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն գտնում է, որ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ին 1-ին չափաբաժնով առաջարկված գնին չի կարող գումարվել ավելացված արժեքի հարկի գումարը, ինչպես նշված է «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքում, այդպիսի ընթացակարգ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը բարձր է «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկից, սակայն չի գերազանցում գնման հայտով նախատեսված առավելագույն գինը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ն ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ համաձայն Ընթացակարգի հրավերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Միաժամանակ Պատվիրատուն տեղեկացրել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված պատվաստանյութի մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը որոշելիս՝ հիմք է հանդիսացել ՌԴ-ի գյուղատնտեսության նախարարության, ՌԴ-ի Վլադիմիր քաղաքի «Կենդանիների առողջության ֆեդերալ կենտրոն» ֆեդերալ պետական բյուջետային կազմակերպության և

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ը արտադրող կազմակերպությունների կողմից ստացված գնային առաջարկները:

**4. ԳԲԽ-49/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 30.12.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ի 16.12.2015թ. և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի 17.12.2015թ. ներկայացրած բողոքները մերժել:

**5. ԳԲԽ-49/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-49/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի և ախտորոշման նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ՝ 7 չափաբաժինների մասով:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.1 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: ***Նմանատիպ են համարվում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անհրաժեշտ կենսապատվաստուկների և ախտորոշիչ միջոցների մատակարարումը:***

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա ***պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:***

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

3. Ընթացակարգի 1-6-րդ չափաբաժինների առարկան է հանդիսացել «Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր», իսկ 7-րդ չափաբաժնի առարկան՝ «Ախտորոշման նյութեր»:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել՝ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-7-րդ չափաբաժինների մասով, «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն՝ 1-6-րդ չափաբաժինների մասով և «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ն՝ 1-ին, 4-7-րդ չափաբաժինների մասով:

5. «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի հավելված N 3.1-ով, ներկայացրել է մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, որով «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ»

ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել էգյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անհրաժեշտ կենսապատվաստուկների և ախտորոշիչ միջոցների մատակարարման պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 206000000 ՀՀ դրամ և պարտավորվում է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6. «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն, որպես նախկինում կատարված համանման պայմանագրեր, ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝

- «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և «Սոնետ» ՍՊԸ-ի միջև 02.12.2014թ. կնքված պայմանգիրը, 26.12.2014թ. հաշիվ թիվ 27-ը, ինչպես նաև 26.12.2014թ. հանձնման-ընդունման ակտը, որի համաձայն՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն հանձնել է պայմանագրով նշված ապրանքը, իսկ «Սոնետ» ՍՊԸ-ն՝ ընդունել է պայմանագրով նշված ապրանքը:
- «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և «Մաքս Պրո» ՍՊԸ-ի միջև 02.03.2015թ. կնքված պայմանագիրը, 25.03.2015թ. հաշիվ թիվ 002-ը, ինչպես նաև 25.03.2015թ. հանձնման-ընդունման ակտը, որի համաձայն՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն հանձնել է պայմանագրով նշված ապրանքը, իսկ և «Մաքս Պրո» ՍՊԸ-ն՝ ընդունել է պայմանագրով նշված ապրանքը:
- «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության միջև 12.01.2015թ. կնքված «Պետության կարիքների համար գյուղկենդանիների հիվանդությունների դեմ պատվաստանյութերի ձեռքբերման պետական գնման N ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-14/2-3» պայմանագիրը, 25.03.2015թ. հաշիվ թիվ 001-ը, ինչպես նաև 25.03.2015թ. հանձնման-ընդունման ակտը և այլն:
- «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության միջև 09.01.2014թ. կնքված «Պետության կարիքների համար գյուղկենդանիների հիվանդությունների դեմ պատվաստանյութերի և շիճուկների ձեռքբերման պետական գնման N ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-13/7-3» պայմանագիրը, 18.02.2014թ. հաշիվ թիվ 05-ը, ինչպես նաև 18.02.2014թ. հանձնման-ընդունման ակտը և այլն:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2015 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.6 կետով որոշում է կայացրել 1-ից 6-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-

ին, 7-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ին, 4-րդ և 7-րդ չափաբաժիններով 2-րդ տեղ զբաղցնող ճանաչել «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ին:

8. Քարտուղարը էլեկտրոնային նամակով դիմել է «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ին և հայտնել, որ անհրաժեշտ է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև հրավերի 1-ին մասին 4.3 կետի «զ» ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Ինչպես նաև անհրաժեշտ է երեք աշխատանքային օրվա ընթացքում պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ artur.aperyan@minagro.am, ուղարկել վերը նշված փաստաթղթերը:

Ծանուցմամբ քարտուղարը նշել է նաև, որ անհրաժեշտ է լրացուցիչ հիմնավորումներ ներկայցնել 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժիններով ներկայացված գների վերաբերյալ, քանի որ ներկայացվել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ:

9. «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն, որպես ցածր գնային առաջարկի հիմնավորում ներկայացրել է «Ставропольская биофабрика» ՓԿՊ-ի 04.12.2015թ. թիվ 1934 և 07.12.2015թ. թիվ 09-02/8123 գրությունների պատճենները:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությամբ որոշում է կայացվել «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի՝ որակավորման պահանջներին հրավերով սահմանված պայմաններին պահանջներին համապատասխանության արդյունքները հաստատելու վերաբերյալ:

11. Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 4 որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել՝ 1-6-րդ չափաբաժիններով՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն, իսկ 7-րդ չափաբաժնով՝ «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ն:

12. Ըստ Հայտարարության՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ին և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ին սահմանված կարգով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ՝ համապատասխանաբար 1-6-րդ և 7-րդ չափաբաժիններով:

13. Կենտրոնում 2015թ. դեկտեմբերի 21-ին ժամը 17:00-ին կազմակերպված ԳԲԽ-49/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին բողոքաբերները պարտավորվել են ներկայացնել ապացույցներ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված

նախկինում կատարված պայմանագրերի ոչ արժանահավատ լինելու վերաբերյալ, սակայն մինչև սույն եզրակացությունը Գնումների բողոքարկման խորհրդին տրամադրելը որևէ փաստաթուղթ չեն ներկայացրել:

## 6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի

ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Հրավերի ամբողջական փաթեթի վերլուծությունից երևում է, որ հրավերի 1-ին մասի 2.1 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: ***Նմանատիպ են համարվում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անհրաժեշտ կենսապատվաստուկների և ախտորոշիչ միջոցների մատակարարումը:***

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա ***պատշաճ***

***կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:***

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Այսպիսով, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) արձանագրում է, որ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն «ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի հավելված N 3.1-ով, ներկայացրել է մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, որով «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել էգյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անհրաժեշտ կենսապատվաստուկների և ախտորոշիչ միջոցների մատակարարման պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 206000000 ՀՀ դրամ և պարտավորվում է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այնուհետև, «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն, որպես նախկինում կատարված համանման պայմանագրեր, ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝

- «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և «Սոնետ» ՍՊԸ-ի միջև 02.12.2014թ. կնքված պայմանգիրը, 26.12.2014թ. հաշիվ թիվ 27-ը, ինչպես նաև 26.12.2014թ. հանձնման-ընդունման ակտը, որի համաձայն՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն հանձնել է պայմանագրով նշված ապրանքը, իսկ «Սոնետ» ՍՊԸ-ն՝ ընդունել է պայմանագրով նշված ապրանքը:
- «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և «Մաքս Պրո» ՍՊԸ-ի միջև 02.03.2015թ. կնքված պայմանագիրը, 25.03.2015թ. հաշիվ թիվ 002-ը, ինչպես նաև 25.03.2015թ. հանձնման-ընդունման ակտը, որի համաձայն՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն հանձնել է պայմանագրով նշված ապրանքը, իսկ և «Մաքս Պրո» ՍՊԸ-ն՝ ընդունել է պայմանագրով նշված ապրանքը:
- «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության միջև 12.01.2015թ. կնքված «Պետության կարիքների համար գյուղկենդանիների

հիվանդությունների դեմ պատվաստանյութերի ձեռքբերման պետական գնման N ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-14/2-3» պայմանագիրը, 25.03.2015թ. հաշիվ թիվ 001-ը, ինչպես նաև 25.03.2015թ. հանձնման-ընդունման ակտը և այլն:

- «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ի և ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության միջև 09.01.2014թ. կնքված «Պետության կարիքների համար գյուղկենդանիների հիվանդությունների դեմ պատվաստանյութերի և շիճուկների ձեռքբերման պետական գնման N ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-13/7-3» պայմանագիրը, 18.02.2014թ. հաշիվ թիվ 05-ը, ինչպես նաև 18.02.2014թ. հանձնման-ընդունման ակտը և այլն:

Խորհուրդը գտնում է, որ անհիմն է «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի 16.12.2015թ. և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի 17.12.2015թ. բողոքներում նշված եզրահանգումներն այն մասին, որ «Ագրոխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը արժանահավատ չեն և պայմանագրերում ներկայացված է ոչ ճիշտ տեղեկատվություն, քանի որ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՁ-ի և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրերի արժանահավատության և պայմանագրերում ներկայացված ոչ ճիշտ տեղեկատվության վերաբերյալ Խորհրդին որևէ հիմնավոր ապացույց չեն ներկայացվել, որոնք կհաստատեն պայմանագրերի ոչ արժանահավատ լինելը, մինչդեռ Կենտրոնում 2015թ. դեկտեմբերի 21-ին ժամը 17:00-ին կազմակերպված ԳԲԽ-49/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին բողոքաբերները պարտավորվել են ներկայացնել նման ապացույցներ, սակայն մինչև Խորհրդի կողմից սույն որոշումը կայացնելը որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:

**2.** Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Նույն կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Տվյալ դեպքում, Խորհուրդը արձանագրում է նաև, որ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն (1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժիններով) հայտով առաջարկել է նախահաշվային գնից 75%-ից ցածր գին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ին առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժիններով ներկայացված գների վերաբերյալ չհիմնավորված ցածր գնային առաջարկի համար ներկայացնել լրացուցիչ հիմնավորում: «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն, որպես ցածր գնային առաջարկի հիմնավորում ներկայացրել է «Ставропольская биофабрика» ՓԿՊ-ի 04.12.2015թ. թիվ 1934 և 07.12.2015թ. թիվ 09-02/8123 գրությունների պատճենները, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է բավարար և Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 4 որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել՝ 1-6-րդ չափաբաժիններով՝ «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ տվյալ պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, գործել է իրավաչափ, ուստի այս մասով «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ի բողոքը ևս անհիմն է:

**3.** «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի բողոքով Պատվիրատուի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 3 արձանագրության 1.6.1 կետով «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ին ***1-ին չափաբաժինով 2-րդ տեղը զբաղեցնող ճանաչվելու հանգամանքը*** վիճարկելու

վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2015 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.6 կետով որոշում է կայացրել 1-ից 6-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱԳՐՈԽԻՄՊՐՈՄ» ՍՊԸ-ին, 7-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ին, **1-ին,** 4-րդ և 7-րդ չափաբաժիններով **2-րդ տեղ զբաղցնող ճանաչել «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ին**, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ին:

Այսպիսով, պայմանագրի գինը, որը ներառում է կատարվելիք բոլոր վճարները, այդ թվում՝ հարկերը, չպետք է գերազանցի գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացման չափը, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ մերժելով «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գործել է իրավաչափ, քանի որ ավելացված արժեքի հարկ վճարող մասնակցի («ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի) գնային առաջարկը ենթակա է մերժման՝ գնման նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ: Ինչ վերաբերում է «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ին նույն չափաբաժնով 2-րդ տեղ զբաղցնող մասնակից ճանաչելուն, ապա Խորհուրդը հայտնում է, որ տվյալ դեպքում Ընթացակարգի գնահաող հանձնաժողովը չի խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՉ-ն իր գնային առաջարկում ԱԱՀ-ի սյունյակը չի լրացրել և գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կարգով (մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկման):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԴՊՈՒՀ-ի 16.12.2015թ. և «ԱՄԱՍԻԱ» ՍՊԸ-ի 17.12.2015թ. ներկայացրած բողոքները մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Բողոքը քննող հանձնաժողով՝**

**Անդամներ՝** **Արթուր Բաղդասարյան**

**Վահե Բաբայան**